ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ մանկավարժների թափուր աշխատատեղի համար.

Մասնագիտական առարկաների մոդուլներ դասավանդող դասախոսներ՝
Հատուկ մասնագիտական

«Դիզայն» մասնագիտության մոդուլ «Գունանկար» (212 ժամ)):

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները.

• դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն ՀՀ-ում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1, դիմում (լրացվում է տեղում),
2, կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճեն),
3, անձնագիր (բնօրինակը և պատճեն),
4, աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5, ինքնակենսագրություն(Զև 4),
6, մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն),
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

**Փաստաթղթերն ընդունվում են** 27.04.2023թ. մինչև 12.05.2023թ. ներառյալ, երկուշաբթիից ուրբաթ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի տոն օրերից:
**Մրցույթը տեղի կունենա** 17.05.2023թ.-ին, ժամը 12:00-ին, Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 39:
Տեղեկությունների համար այցելել **www.terlemezyan.com,**
զանգահարել **+374 10 44 38 04, +374 10 44 25 42** հեռախոսահամարներով: